

# Բարերարութիւն Եւ արդի մարտահրաւերներ

2014 · 2023 · 2027



CALOUSTE GULBENKIAN  
FOUNDATION

Հայկական  
Համայնքներու  
Բաժանմունք



# Բարերարություն եւ արդի մարտահրավերներ

Գալուստ Կիլպէնկեան  
Հիմնարկություն

2014 · 2023 · 2027

© Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկություն  
(բովանդակություն եւ ձեւաւորում), 2024:

Լուսանկարներու գործածությունը թոյլտուութեամբ:

Տպուած՝ Փորթուկալ:



# «Բաժանմունքին առանձնայատկությունը իր սփիւռքակեդրոն մօտեցումն է, միեւնոյն ժամանակ իր գործունէութեան մէջ հանգամանօրէն կ'անդրադառնայ հայկական աշխարհի Հայաստան եւ Սփիւռք երկուութեան»:

## Ռազմիկ Փանոսեան

Տնօրէն, Հայկական Համայնքներու Բաժանմունք  
Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն

## Պատմական ակնարկ

Հայ գործարար եւ բարեգործ Գալուստ Սարգիս Կիլպէնկեան ծնած է 1869-ին Սկիւտար, Պոլիս:

Ամբողջ կեանքին ընթացքին ան ծաւալած է մարդասիրական գործունէութիւն. իր շնորհիւ հիմնադրուած են Երուսաղէմի պատրիարքարանի գրադարանն ու Լոնտոնի Սբ. Սարգիս եկեղեցին, օժանդակած է դպրոցներու եւ Պոլսոյ հիւանդանոցին. յատուկ ուշադրութիւն դարձուցած է Միջին Արեւելքի հայութեան:

Ըստ Կիլպէնկեանի կտակին՝ 1956-ին Լիզպոնի մէջ կը հիմնուի Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւնը, որ մինչ օրս կը կատարէ բարեգործական աշխատանքներ՝ արուեստի, կրթութեան եւ գիտութեան ոլորտներուն մէջ:



Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն © Ricardo Oliveira Alves

Հայկական Համայնքներու Բաժանմունքը, նախապէս՝ Միջին Արեւելքի Բաժանմունք, նոյնպէս հիմնուած է 1956 թուականին:

Հայկական Համայնքներու Բաժանմունքի պատասխանատու հոգաբարձուն միշտ եղած է հիմնադիրի ընտանիքին անդամ: Ներկայիս, Բաժանմունքին պատասխանատու հոգաբարձուն է Մարթին Էսսեան, որ Գալուստ Կիլպէնկեանի ծոռն է: Էսսեան նաեւ պատասխանատուն է Հիմնարկութեան Անգլիոյ մասնաճիւղին եւ բովանդակ Հիմնարկութեան նպաստատուութեան գործունէութեան: Ան արեւմտահայերէնի մեծ պաշտպան է եւ Հիմնարկութեան մէջ կենսոլորտի աղէտի դիմադրութեան եւ կենսաբազմազանութեան կորուստի դէմ առնուած ջանքերու ջատագովը:

# Հայկական Համայնքներու Բաժանմունք. ներածական մը



Ստեփանակերտի մէջ աշխատանոց, 2022

Հայկական Համայնքներու Բաժանմունքը Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան նպաստատու բաժանմունքներէն մէկն է, որ կ'աշխատի երկու ուղղութեամբ. կ'օժանդակէ նախագիծերու եւ կը տրամադրէ համալսարանական կրթանպաստներ:

Կրթաթոշակներու ծրագիրին միջոցով Բաժանմունքը կը փորձէ դրական ներգործութիւն ունենալ հայկական աշխարհին մէջ՝ ներդրում ունենալով ապագայի մտաւորականներու, գիտնականներու եւ ղեկավարներու յառաջացումին:


Ասոր առընթեր՝ Բաժանմունքը կ'օժանդակէ հայկական դպրոցներու, լեզուի ու մշակոյթի վերաբերող ծրագիրներու, կը հովանաւորէ հրատարակութիւններ եւ Հայաստանի մէջ կը մշակէ զանազան ծրագիրներ:

2013-ին Ռազմիկ Փանոսեան կը ստանձնէ Բաժանմունքի տնօրէնի պաշտօնը եւ այնուհետեւ Բաժանմունքին գործունէութիւնը կը կեդրոնանայ արեւմտահայերէնի կենսունակութիւնը ապահելու, կրթանպաստներու միջոցով հայագիտութեան ոլորտը թարմացնելու եւ Հայաստանի մէջ քաղաքացիական հասարակութեան սատարելու վրայ:



Զարմանազան 2017





Ամերիկա  
 Անգլիա  
 Արժանքին  
 Աստորիա  
 Գանատա  
 Գերմանիա  
 Երուսաղեմ  
 Զուիցերիա  
**Թուրքիա**  
 Իտալիա  
 Լեհաստան  
**Լիբանան**  
**Հայաստան**  
 Հոլանդա  
 Հունգարիա  
 Յունաստան  
 Չեխիա  
 Պելճիքա  
 Պրագիլ  
 Պուլկարիա  
 Ռումանիա  
 Սպանիա  
 Վրաստան  
 Փորթուկալ  
**Տրանսսա**

# Որո՞նք են Բաժանմունքին ներկայ առաջնահերթությունները

Բաժանմունքին առաքելությունն է՝

Ամրապնդել լեզուն, մշակույթը  
եւ քննական մտածողությունը  
հայկական աշխարհին մեջ

Հայկական Բաժանմունքը իր աշխատանքը կը կեդրոնացնէ հոն, ուր կրնայ էապէս յաւելեալ արժէք մը բերել: Բաժանմունքին առանձնայատկութիւնը իր սփիւռքակեդրոն մօտեցումն է, միեւնոյն ժամանակ իր գործունէութեան մէջ հանգամանօրէն անդրադառնալով հայկական աշխարհի երկուութեան՝ Հայաստան եւ Սփիւռք:

Իր գործունէութեան եւ օժանդակութիւններուն միջոցով Բաժանմունքը կը փորձէ դրական ներգործութիւն ունենալ հայկական աշխարհին վրայ: Իր նիւթական ու քաղաքական անկախութեան բերումով եւ իր առաջնահերթութիւններուն, գործընկերներու ցանցին, նորարարական ծրագիրներուն եւ մարդասիրական աշխատանքին ճամբով՝ Հիմնարկութիւնը կը ձգտի բարեփոխումներ բերելու մասնաւորաբար սփիւռքահայ կեանքին մէջ:

Հայկական Բաժանմունքին ներկայ առաջնահերթութիւններն ու գործունէութիւնը կ'ամփոփուին հետեւեալ կէտերուն մէջ.

1. Արեւմտահայերէնի զարգացում.
2. Մշակութային ստեղծագործութիւն եւ զարգացում.
3. Հետազօտութիւններ եւ քննական ներգրաւուածութիւն.
4. Համալսարանական կրթանպաստներ:



Երիտասարդներու հետ զրոյց, Պէյրութ, Լիբանան 2023

Հետեւաբար, Սփիւռքի մէջ կեդրոնացումը արեւմտահայերէնի եւ մշակութային ստեղծագործութեան վրայ է, իսկ Հայաստանի մէջ՝ հետազօտութիւններու, թարգմանութիւններու, ինչպէս նաեւ քննական մտքի զարգացումին վրայ:

Բաժանմունքին անմիջական շահառուներուն մաս կը կազմեն դպրոցականները, մտաւորականները, քաղաքացիական հասարակութեան ոլորտի կազմակերպութիւնները եւ համալսարանները: Տարուայ մը ընթացքին կը հովանաւորուին միջին հաշուով յիսունէ աւելի նոր նախագիծեր, եւ նպաստ կը յատկացուի երկու հարիւրէ աւելի անհատներու (կրթանպաստները ներառեալ): Բաժանմունքին նախաձեռնութիւնները կը թիրախաւորեն աշխարհասփիւռ հայերը, որոնք հետաքրքրուած են լեզուով ու մշակույթով եւ կը ջանան պահպանել իրենց հայկական ինքնութիւնը, ինչպէս նաեւ անոնք, որոնք կը փափաքին նպաստել Հայաստանի մէջ բաց եւ ժողովրդավար հասարակութեան մը գոյացումին:



## Ինչպե՞ս կ'աշխատի Բաժանմունքը

Կայունությունը եւ արդարակշռությունը երկու հիմնական սկզբունքներն են, որոնք առանցքը կը կազմեն բովանդակ Հիմնարկության գործունեության: Բաժանմունքը որդեգրած է չորս յստակ ուղղություններ, որոնք կը ներառեն թե՛ կայունությունը, թե՛ արդարակշռությունը:

### I. Արեւմտահայերէն լեզու

Բաժանմունքը շօշափելի ներդրումներ կ'ընէ ապահովելու արեւմտահայ լեզուի ու մշակոյթի կենսունակութիւնն ու երկարաժամկետ կայունութիւնը:

Բաժանմունքը կ'աջակցի՝

1. Լեզուի իրացման ծրագիրներու եւ դասընթացներու.
2. Ուսուցիչներու զարգացման ծրագիրներու.
3. Մանկավարժական նիւթերու ստեղծումի.
4. Սփիւռքի դպրոցներու նպատակային օժանդակութեան.
5. Հրատարակութիւններու (թուայինը ներառեալ).
6. Թեքնաբանական նախաձեռնութիւններու եւ լեզուական գործիքներու:



Անի քաղաքին նուիրուած ցուցահանդէս, Կարս, Թուրքիա 2022

## «Բաժանմունքը կենսական դեր խաղացած է արեւմտահայերէնը «քարտէզի վրայ» դնելու մէջ»:

Տնօրէն, Հայկական Համայնքներու Բաժանմունք  
Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութիւն

### II. Մշակութային ստեղծագործութիւն եւ զարգացում

Բաժանմունքին մօտեցումը կը կենդրոնանայ ստեղծարարութեան, նորարարութեան եւ մշակոյթի փոխակերպող ուժին վրայ՝ պայմաններ ստեղծելով, որ նոր սերունդը կարենայ ստեղծել իր ուրոյն մշակոյթը՝ իր իսկ լեզուով եւ առնչուիլ աշխարհին հետ:

Բաժանմունքը կ'աջակցի հետեւեալ գաղափարներով առաջնորդող նախագիծերու.

1. Ստեղծում եւ նորարարութիւն. շեշտը դնելով հայերէնով նոր մշակոյթ մը ստեղծելու վրայ՝ թարմութիւն բերելու արեւմտահայերէնի ստեղծագործական ոլորտներուն մէջ. նպատակն է ներշնչել արդիականութիւն մը, վերականգնողական մօտեցումներ եւ ապագայահայեաց ըմբռնումներ քաջալերել՝ ի սպաս թարմ տեսլականի մը, որ կը միացնէ անցեալը, ներկան ու ապագան:
2. Ընկերային եւ հասարակական փոխակերպում. քաջալերելով մշակութային յառաջընթացները, որոնք կը խթանեն այլընտրանքային պատկերացումները:
3. Կայուն ապագայ. մշակութային եւ ստեղծագործական ոլորտները գործածելու որպէս կենսոլորտի եւ այլ աղէտներու դէմ պայքարելու միջոց:

### III. Հետազօտութիւններ եւ քննական ներգրաւուածութիւն

Բաժանմունքը կը կեդրոնանայ Հայաստանի եւ աւելի լայն առումով՝ աշխարհասփիւռ հայութեան համար առաջնահերթ կարեւորութիւն ունեցող եւ ընթացիկ խնդիրներու վերաբերող հետազօտութիւններու եւ քննական յանձնառութեան ամրապնդումին վրայ:

Բաժանմունքը կ'աջակցի՝

1. Հայաստանի եւ հայկական նիւթերու առնչուող ժամանակակից գիտահետազօտական նախագիծերու եւ հրատարակութիւններու.
2. Միջազգային կարեւոր աշխատութիւններու հայերէն թարգմանութեան ու տարածումին.
3. Միջոցառումներու եւ նախաձեռնութիւններու, ներառեալ՝ գիտաժողովներ, դասախօսութիւններ, դասընթացքներ եւ այլ համապատասխան կրթական ձեռնարկներու եւ տեսանիւթերու, որոնք կը խթանեն քննական յանձնառութիւնը եւ նորարարութիւնը՝ յստակօրէն առնչուելով քաղաքականութիւններու մշակումին հետ:

#### IV. Համալսարանական կրթանպաստներ

Հայկական Բաժանմունքին հիմնական գործունեություններն մեկն է հայ եւ հայագիտական ոլորտի ուսանողներու, մասնագետներու եւ հետազոտողներու համալսարանական կրթաթոշակներու տրամադրումը:

Կրթաթոշակները իրենց էութամբ արդարակշռութեան գործիքներ են: Անոնք առիթ կու տան արժանի ուսանողներու օգտուելու բարձրագոյն կրթութեան հնարաւորութիւններէն եւ արդիւնատրելու իրենց ողջ ներուժը:

Ամեն տարի Բաժանմունքը մէկ միլիոն եւրոյի կրթաթոշակ կը յատկացնէ:

Բաժանմունքին կրթանպաստներու ծրագիրը ունի հետեւեալ բաժինները.

1. Հայագիտութեան ընթացաւարտ աստիճանի կրթանպաստներ.
2. Հայագիտութեան համար կարճաժամկէտ հետազոտական դրամաշնորհներ.
3. Բարձրագոյն կրթութիւն՝ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար (գլխաւորապէս ընթացաւարտութեան թեկնածու).
4. Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամբորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն եւ երիտասարդ հետազոտողներուն համար (բոլոր նիւթերուն վերաբերող):

Ամեն տարի տարբեր չափերով մօտաւորապէս հարիւր յիսուն նոր կրթաթոշակ կը յատկացուի տասնհինգէն քսան երկիրներու մէջ:

**€ 25,250,000**  
2014-էն մինչեւ 2023-ի կէսը

€ 9.3 միլ Կրթանպաստներ

€ 16 միլ Նախագիծեր

+1,800 40 երկիրներու մէջ կրթանպաստներ

+980 28 երկիրներու մէջ հովանաւորուած նախագիծեր

+275 Բազմալեզու հրատարակութիւններ

Ասոնց առընթեր, Բաժանմունքը մարդասիրական օգնութիւն կը ցուցաբերէ ճգնաժամային պահերու. Հայաստանի եւ Միջին Արեւելքի մէջ պատահած աղէտներուն, Հիմնարկութիւնը ցուաբերած է մարդասիրական օգնութիւն եւ պատշաճ արձագանգած արտակարգ իրավիճակներուն:

Բաժանմունքը իր տարեկան հաշուետուական զեկոյցները կը հրապարակէ առցանց. կրթաթոշակներու զեկոյցները, աջակցութիւն ստացած նախագիծերու ցանկերը եւ հովանաւորուած հրատարակութիւններու ցուցակները հասանելի են Բաժանմունքին երկլեզու կայքէջին վրայ:

Առաջնորդուելով դրական ներգործութիւն ունենալու հիմնական սկզբունքով՝ Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքին նպաստատուութիւնը միաժամանակ կը կեդրոնանայ՝ շարունակականութեան եւ փոփոխութեան, հին ու նոր գործընկերներու միջեւ հաւասարակշռութեան, նոր մարտահրաւերներ դիմակայելու եւ միեւնոյն ժամանակ նախորդ ձեռքբերումները ամրապնդելու վրայ՝ այնու օժանդակելով մեծ եւ փոքր նախագիծերու եւ անհատներու:

Բաժանմունքին ծրագիրները կը ներառեն բաց յայտի դիմումներով ստացած նախագիծերը, ինչպէս նաեւ իր իսկ մտայղացած նախագիծերու իրագործումը՝ զանազան գործընկերներու միջոցաւ:

Հայկական Համայնքներու Բաժանմունքին տարեկան պիւտճէն 3,3 միլիոն եւրօ կը կազմէ (աշխատավարձերը բացառեալ):

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէք Բաժանմունքին կայքէջը, բաժանորդագրուեցէք լրատուին եւ հետեւեցէք պաշտօնական Facebook-ի էջին:

<https://gulbenkian.pt/armenian-communities/hy>

Calouste Gulbenkian Foundation  
Armenian Communities / Հայկական Բաժանմունք  
<https://www.facebook.com/gulbenkian.armenian.communities>

Calouste Gulbenkian Foundation  
Armenian Communities Department

Avenida de Berna, 45-A  
1067-001 Lisbon  
Portugal

carmenias@gulbenkian.pt  
(+351) 21 782 3658



**«Հայկական Համայնքներու  
Բաժանմունքը կ'առաջնորդուի  
մարդասիրական  
գործունեութեան  
կարելորագոյն սկզբունքներով՝  
հետապնդելով յստակ  
նպատակներ եւ  
կեդրոնանալով դրական  
ներգործութեան վրայ»:**

**Մարթին Էսսեան**

Հոգաբարձու, Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն